

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստի
29.01.2015թ.

Նիստը վարում էր ՀՀ Արագածոտնի մարզպետ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի նախագահ Ս.Սահակյանը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին մարզպետարանի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի բոլոր անդամները:

Հանձնաժողովի նիստին որպես հրավիրվածներ մասնակցում էին “Մանսուր” ՀԿ-ի ղեկավար Անահիտ Մովսիսյանը, “Հայաստանի կույրերի միավորման” Աշտարակի ԿՍԿ վարչության պետ Սերգեյ Այվազյանը:

Օրակարգ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի 28.11.2014թ. նիստում քննարկված հարցերի մասին / զեկ. Հանձնաժողովի քարտուղար Գ.Դանիելյան/
2. Հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնախնդիրների ուղղությամբ մարզի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կատարած աշխատանքների մասին / զեկ. Հանձնաժողովի քարտուղար Գ.Դանիելյան/
1. Առաջին հարցի վերաբերյալ հանձնաժողովի անդամներին տեղեկատվություն հաղորդվեց ազգային հանձնաժողովի վերջին նիստում քննարկված “Տեղեկատվություն <<Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով>> (LIFE) ծրագրով 2012-2014թթ կատարված աշխատանքների մասին”, <<Քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպության կողմից մասհանում կատարելու և դրա օգտագործման կարգը հաստատելու մասին>> որոշման, “Տեղեկատվություն հասարակական, արտադրական և բազմաբնակարան բնակելի շենքերի ճարտարապետահատակագծային առաջադրանքների կազմման, նախագծերի

մշակման, փորձաքննության և դրանց համաձայնեցման փուլերում հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների նկատմամբ իրականացված վերահսկողության վերաբերյալ՝ ընդունված որոշման մասին:

2. Երկրորդ հարցի վերաբերյալ ներկայացվեց, որ մարզում կան մանկուց հաշմանդամ 493 երեխա, որոնց առողջական, սոցիալ-հոգեբանական աջակցության, նրանց ծնողներին անհրաժեշտ խորհրդատվություն ցույց տալու նպատակով կարևոր է մարզի խնամակալության և հոգաբարձության մարմինների ուշադրությունը: Համայնքների մեծ մասը նրանց խնդիրների լուծման նպատակով աջակցում են ծնողներին, համագործակցում կրթական հաստատությունների հետ երեխաների կրթական գործընթացը կազմակերպելու հարցում: Կարևորվեց ԽՀՀ-ի կողմից համապատասխան մասնագետների ներգրավմամբ պարբերաբար հարցերի քննարկում կազմակերպելու, անհրաժեշտության դեպքում այլ կառույցների հետ համագործակցություն ապահովելու, կրթությունից դուրս մնացած երեխաներին կրթական համապատասխան հաստատություններում ներգրավելու համար:

Հանձնաժողովը որոշեց

- Պրակտիկա դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից մշակված օրինագծերի, որոշումների նախագծերի քննարկմանը մասնակից դարձնել նաև մարզի սոցիալական, առողջապահական, կրթական կազմակերպություններին, համայնքների ղեկավարներին:
- ԸԿԵԻ պաշտպանության բաժնին՝ գրություն պատրաստել մարզի համայնքապետերին հաշմանդամություն ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման անհրաժեշտության վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահ՝

Ս.Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գ.Դանիելյան

